«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրենի
պարտականությունները կատարող,
տնտեսագիտության թեկնածու

Ե.Ա.Հակոբյան
12 օգոստոսի 2026թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Քրիստինե Վալերիկի Նիկողոսյանի «Բուհ-ձեռնարկություն գործընկերության հեռանկարները ՀՀ-ում)» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Մասնակցում էին՝ Լիանա Խաչատրյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Եվգենյա Հակոբյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Ռոբերտ Սարինյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ.,* Բելլա Գաբրիելյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Գրիգոր Մանուկյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Շողեր Պողոսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Գևորգ Հարությունյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Ալվարդ Մատինյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Լիանա Հարությունյան ՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ:*

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բուհ-ձեռնարկություն համագործակցությունը մարդկային կապիտալի զարգացման հիմնական գործոններից մեկն է: Կողմերից յուրաքանչյուրն այս համագործակցությունից ունի իր սպասելիքները: Բուհը շահագրգռված է ձեռնարկությունների հետ համագործակցությամբ՝ ավելի մրցունակ շրջանավարտներ պատրաստելու և աշխատաշուկայի պահանջներին բավարարելու նպատակով: Մյուս կողմից, ձեռնարկությունն ակնկալում է համագործակցության արդյունքում ունենալ առավելագույն գիտելիքներով և անհրաժեշտ հմտություններով կադրեր, որոնց վերապատրաստումը կլինի նվազագույն ծախսերով: Սա, թերևս, բուհ ձեռնարկություն գործընկերության ավանդական մեխանիզմն է: Այսօր, ավելի քան երբևէ, բուհերի դերը չի սահմանափակվում միայն որակյալ մասնագետների և շրջանավարտների պատրաստմամբ կամ ակադեմիական հետազոտությունների իրականացմամբ: Թեև բուհ-ձեռնարկություն համագործակցությունը համաշխարհային մակարդակով լայն ուշադրության է արժանացել թե՛ ակադեմիական, թե՛ քաղաքականության

շրջանակներում, այնուամենայնիվ Հայաստանի Հանրապետությունում դրա ներկա վիճակի, մարտահրավերների և զարգացման հնարավորությունների վերաբերյալ համապարփակ հետազոտություններ բավարար չափով իրականացված չեն: Սույն ուսումնասիրությունը նպատակ ունի լրացնել այդ բացը՝ վերլուծելով Հայաստանի Հանրապետությունում բուհ-ձեռնարկություն համագործակցության ներկայիս վիճակը և բացահայտելով այն հիմնական գործոնները, որոնք նպաստում կամ խոչընդոտում են բուհերի և ձեռնարկությունների միջև արդյունավետ ու կայուն գործընկերության ձևավորմանը, ինչով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակը ՀՀ-ում բուհ–ձեռնարկություն գործընկերության զարգացման ներուժի ու ներկա վիճակի վերլուծությունն է, դրա ինստիտուցիոնալ, կազմակերպակառուցվածքային առանձնահատկությունների բացահայտումը, ինչպես նաև գործընկերության մշտադիտարկման և առաջխաղացման համապարփակ մեթոդաբանական շրջանակի մշակումը: Հետազոտության նպատակի շրջանակում սահմանվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել բուհ-ձեռնարկություն գործընկերության տեսական և մեթոդաբանական հիմքերը՝ բացահայտելով դրա դերակատարներին և զարգացման արդի մոտեցումները:
- Վերլուծել բուհ-ձեռնարկություն համագործակցության հիմնական կառուցակարգերը, ինստիտուցիոնալ կառույցները, տեխնոլոգիաների փոխանցման մեխանիզմները և շահակիցների միջև փոխազդեցության առանձնահատկությունները:
- Ուսումնասիրել Եվրոպական միության երկրների և Հայաստանի բուհ–ձեռնարկություն գործընկերությունը շրջանակները, նորարարական կարգավորումները, խթանող քաղաքականության էկոհամակարգերը, իրավական մտավոր սեփականության պաշտպանության մեխանիզմները և մասնակցության փորձը:
- Գնահատել Եվրոպական միության ընտրված երկրներում, անցումային տնտեսություններում և գործընկերության Հայաստանում զարգացման բուհ–ձեռնարկություն մակարդակը՝ հիմնվելով 4 նորարարության, համագործակցության և հետազոտությունների, աշխատաշուկայի ցուցանիշների վրա:
- Գնահատել Հայաստանում բուհ–ձեռնարկություն գործընկերության ներկա վիճակը՝ բուհերի, ձեռնարկությունների, ուսանողների / շրջանավարտների և պետական կառավարման մարմինների տեսանկյուններից:

- Բացահայտել Հայաստանում բուհ-ձեռնարկություն համագործակցության զարգացմանը խոչընդոտող ինստիտուցիոնալ, իրավական, ֆինանսական և կազմակերպական հիմնական խնդիրներն ու խնդրահարույց հարցերը:
- Վերլուծել ՀՀ բարձրագույն կրթական հաստատություններում կիրառվող համագործակցության ուղիների և ինստիտուցիոնալ աջակցության մեխանիզմների արդյունավետությունն ու կիրառելիությունը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԸ

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթները հետևյալն են..

Մշակվել և ՀՀ պայմաններին է հարմարեցվել Բուհ-Ձեռնարկություն Կառավարություն-Ուսանող/Շրջանավարտ (UIGS) ընդլայնված մոդելը, որի հիման վրա կառուցվել է համագործակցության կապուղիների հիերարխիկ շրջանակ:

1. Մշակվել և ՀՀ պայմաններին է հարմարեցվել Բուհ-Ձեռնարկատիրություն-Կառավարություն-Ուսանող/Շրջանավարտ (UIGS) ընդլայնված մոդելը, որի հիման վրա կառուցվել է համագործակցության կապուղիների հիերարխիկ շրջանակ:
2. Հաշվարկվել է բուհ-ձեռնարկություն համագործակցության ինտենսիվության ինդեքսը (Partnership Intensity Index – PII), որի գործարկման նպատակով կիրառվել է օրդինալ լոգիստիկ ռեգրեսիայի մեթոդը:
3. Մշակվել է համագործակցության կապուղիների և ենթատեսակների առանցքային ցուցանիշների գնահատման համակարգ (KPIs), ինչպես նաև առաջարկվել է UIGS ինդեքսի հաշվարկ՝ որպես բուհերի համեմատական վերլուծության և մշտադիտարկման գործիք:
4. Բուհ-ձեռնարկություն համագործակցությունն ուսումնասիրվել է բազմաշահակցային (multi-stakeholder) մոտեցմամբ՝ համադրելով բուհերի, ձեռնարկությունների, ուսանողների/շրջանավարտների և կառավարության տեսանկյունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակները և խնդիրները, ուսումնասիրության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը,

ձևակերպված են ստացված գիտական արդյունքները և նորույթը, ինչպես նաև դրանց գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Համալսարան–արդյունաբերություն համագործակցության տեսական հիմքերը»** գլխում ուսումնասիրվել են ոլորտի հիմնարար տեսական մոդելները՝ «Ազգային նորարարական համակարգեր»-ի հայեցակարգը (National Innovation Systems) (Lundvall, 1985; Nelson, 1993; Freeman, 1995), Triple Helix մոդելը (Etzkowitz & Leydesdorff, 2000), Quadruple/Quintuple Helix մոդելները (Carayannis et al., 2009), «Համալսարանական հետազոտական էկոհամակարգ»-ի հայեցակարգը (University Research Ecosystem) (Pandey & Pattnaik, 2015), «Ձեռնարկատիրական համալսարան» հայեցակարգը (Entrepreneurial University) (Clark, 1998; Etzkowitz, 1983), «Բաց և փակ նորարարության» մոտեցումը (Open and Closed Innovation) (Chesbrough, 2003), «Խելացի մասնագիտացման ռազմավարությունը» (Smart Specialization Strategy) (OECD, 2013), «User-centered Innovation» (Hippel, 2005), «Ուսանողակենտրոն նորարարության հայեցակարգը» (Student-centered Innovation) (Effendi, 2023; Jurgelevicius et al., 2025), ինչպես նաև Industry 5.0 8 հայեցակարգը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Բուհ-ձեռնարկություն գործընկերությունը Եվրոպական միությունում և զարգացող տնտեսություններում»** գլխում վերլուծվել են ԵՄ քաղաքականության հանգուցային փուլերը (1984 թ. առաջին շրջանակային ծրագրից մինչև 2026 թ. նախատեսվող Եվրոպական նորարարության ակտը):

Ատենախոսության երրորդ՝ **«Բուհ-ձեռնարկություն գործընկերության համեմատական էմպիրիկ գնահատում»** գլխում UIGS մոդելի տրամաբանությամբ իրականացվել է էմպիրիկ հետազոտություն. ուսանողների/շրջանավարտների հարցումներ՝ Վենետիկի Կա'Ֆոսկարի համալսարան (197 մասնակից) և Երևանի պետական համալսարան (189 մասնակից), ՀՀ վեց խոշոր բուհերի (ԵՊՀ, ՀՊՏՀ, ՀԱՊՀ, ՀԱԱՀ, ԲՊՀ, ՃՇՀԱՀ) վարչական և ակադեմիական ներկայացուցիչների հարցում (153 մասնակից), ձեռնարկությունների հարցում (100 կազմակերպություն) և ֆոկուս խմբային հարցազրույցներ ֆինանսաբանկային և ծառայությունների ոլորտների ներկայացուցիչների հետ:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու եզրահանգումներ, որոնք ամփոփված են ատենախոսության ***«Եզրակացություններ»*** բաժնում:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինչպես ցանկացած գիտական աշխատանք, սույն ատենախոսությունը ևս զերծ չէ որոշակի թերություններից, որոնցից կարևորել ենք հետևյալները.

1. Ատենախոսությունն առավելապես կրում է նկարագրական բնույթ և հիմնականում վերաբերում է կրթության քաղաքականությանը քան տնտեսագիտությանը:
2. Ատենախոսն առաջարկում է Կատարողականի առանցքային ցուցանիշների (KPI) միջինը հաշվարկել պարզ միջին թվաբանականով /էջ 24/: Բայց քանի որ KPI համակարգում ընդգրկված ցուցանիշներն ունեն տարբերի կարևորություն /կշիռներ/, ուստի ճիշտ կլիներ հաշվարկը կատարվեր կշռված միջինով:
3. Ատենախոսի առաջարկությունները /ֆակուլտետներում ուսանող-ձեռնարկություն համագործակցության կառույցի ձևավորում, ձեռնարկատիրական վարչերների փորձնական ծրագրի ներդնում/ չունեն տնտեսական հիմնավորում: Ատենախոսությունը կշահեր, եթե գնահատվեին ԲՈՒՀ-Ձեռնարկություն համագործակցության ազդեցությունը շրջանավարտների զբաղվածության, ձեռնարկությունների արտադրողականության կամ Հայաստանի տնտեսության վրա:
4. Ատենախոսը հետազոտության ընթացքում անցկացված սոցիոլոգիական հարցումների շրջանակում փորձ է արել կատարել թե քանակական և թե որակական վերլուծություն(ինչը ներկայացված է աշխատանքի երրորդ գլխում), սակայն թե մեկի և թե մյուսի պարագայում ներկայացված չէ ընտրանքի ձևավորման մեթոդաբանությունը: ԵՊՀ-ի, ՀՀ-ի մյուս 6 ԲՈՒՀ-երի, ինչպես նաև Վենետիկի Կա' Ֆոսկարի համալսարանի ուսանողների և շրջանավարտների առցանց հարցման համար հարցվողների որևէ ընտրանքի մեթոդ, որը կապահովեր հավաքագրված տվյալների հուսալիությունը և ներկայացուցչականությունը (95% վստահության մակարդակ և ±5% սխալի սահման), չի կիրառվել: Ինչ վերաբերում է որակական վերլուծությանը, ատենախոսը նշում է թվով 100 կազմակերպությունների, ֆինանսաբանկային և ծառայությունների ոլորտների ներկայացուցիչների հետ անցկացված ֆոկուս-խմբային հարցազրույցների մասին, սակայն վերջիններիս արդյունքները չեն ներկայացվում որպես համակարգված որակական վերլուծություն՝ ցույց տալով, թե ինչ օրինաչափություններ և տարբերություններ են բացահայտվել և ինչպես են դրանք կապվում հետազոտության հարցերի ու քանակական արդյունքների հետ: Հետազոտության արդյունքների հավաստիության տեսանկյունից վերը նշվածը լուրջ սահմանափակումներ են:
5. Աշխատանքի առաջին գլխում ներկայացվում են ոլորտի հիմնարար տեսական մոդելները՝ հիմնականում արտասահմանյան հեղինակների աշխատությունների հղմամբ: Միաժամանակ, հարկ է նշել, որ ուսումնասիրվող հիմնախնդիրը վաղուց գտնվում է նաև հայ տնտեսագիտական մտքի ներկայացուցիչների գիտական

հետաքրքրության շրջանակում: Այնուամենայնիվ, աշխատանքում հայրենական հեղինակների գիտական ներդրումները ներկայացված են սահմանափակ ծավալով:

6. Աշխատանքում նշվում է, որ Հարավային Կովկասի տարածաշրջանում 2018-2022 թթ. գիտական հրապարակումների ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Ադրբեջանում: Սակայն հարկ է ընդգծել, որ միայն WoS կամ Scopus-ի մասով հրապարակումների առավել մեծ քանակը դեռ չի խոսում ընդհանուր գիտական պոտենցիալի առաջատարը լինելու մասին. այսպես՝ մեկ հոդվածի հաշվով միջին մեջբերումների (citation per publication) կամ ազդեցության այլ ցուցանիշներով, ինչպիսիք են Normalized Citation Impact (CNCI/FWCI տիպի ցուցանիշները), այսինքն գիտական հրապարակումների արդյունավետությամբ, ՀՀ-ն (երբեմն էլ Վրաստանը) շատ ավելի ուժեղ դիրքերում են:
7. Ատենախոսության մեջ խոսվում է բուհ-ձեռնարկություն համագործակցության կապուղիների մասին, որը ենթադրում է համատեղ գիտահետազոտական ծրագրեր, նորարարություններ, ստարտափերի ստեղծում և գիտելիքի առևտրայնացում, ինչը լիովին ընկալելի է բնական գիտությունների մասով: Ցանկալի էր, որ անդրադարձ կատարվեր, թե հատկապես առևտրայնացումը, հումանիտար գիտությունների պարագայում, ի՞նչ ձևերով պետք է իրականացվի:
8. Սովորաբար աղբյուրների վերաբերյալ հղումները առավել հավաստի են ներկայանում, երբ նշվում է աշխատությունը և մեջբերման համապատասխան էջը, ինչպես որ պահանջում է ԲՈԿ-ը, մինչդեռ ատենախոսության մեջ մեծամասամբ խախտված է վերը նշված պահանջը:
9. Աշխատանքում առկա են որոշ տեխնիկական և հարցման տվյալների որակի վրա ազդող հարցաթերթի կառուցվածքային թերություններ, մասնավորապես. սեղմագրի էջ 17-ում նշված է (տե՛ս Գծապատկեր 7), որը սակայն բացակայում է, հավելված 2-ում, ներկայացված հարցաթերթի որոշ հացերում (Հարց 4,14,16-ում), հավելված 3-ի հարց 12-ում բացակայում են համապատասխան անցումները (skip-երը), հավելված 3-ի հարց 9,12-ում բացակայում են «չգիտեմ» տարբերակը, ինչը հարցաթերթի տրամաբանական կառուցվածքում լուրջ բացթողում է, 2.1 և 2.2 գրաֆիկները գրեթե կրկնվում են /էջ 42, 44/ :

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Քրիստինե Վալերիկի Նիկողոսյանի «Բուհ-ձեռնարկություն գործընկերության հեռանկարները ՀՀ-ում)» թեմայով ատենախոսությունը կարելի է որակել որպես

ինքնուրույն հետազոտություն, որն ուղղված է ՀՀ-ում բուհ-ձեռնարկատիրությունն գործընկերության հեռանկարների բացահայտմանը:

Թեկնածուական ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը, արդյունքները և գիտական նորույթը: Հեղինակի կողմից հրապարակած 1 (մեկ) մենագրությունը և 6 (վեց) գիտական հոդվածները համապատասխանում են հետազոտության ուղղվածությանը և խնդիրներին:

Քրիստինե Վալերիկի Նիկողոսյանի «Բուհ-ձեռնարկություն գործընկերության հեռանկարները ՀՀ-ում)» թեմայով ատենախոսությունը և դրան համատեղ կազմված սեղմագիրն ու թվով 1 (մեկ) մենագրության ու 6 (վեց) հոդվածների հրապարակումները համապատասխանում են ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ աշխատանքի հեղինակը արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (12.08.2026թ., արձանագրություն թիվ 11):

Մ. Քոթանյանի անվ. ՏԻ
ավագ գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ա.Գ.Մատինյան**

Մ. Քոթանյանի անվ. ՏԻ
կրտսեր գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Լ.Կ.Հարությունյան**

Մ. Քոթանյանի ՏԻ ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Մատինյանի և նույն ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝ Լ.Հարությունյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում եմ»՝

Մ. Քոթանյանի անվ. ՏԻ
գիտ. քարտուղար,
տնտեսագիտության թեկնածու **Ե.Ա. Հակոբյան**
«12» օգոստոսի, 2026թ.

Կ. Տ.